Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
սեպտեմբերի 30 -ի N 568 - Ա
որոշման

«ՎԵՐՋ ԹՎԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆԸ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագիրը միտված է Հայաստանի և Արցախի ոլորտային նախարարությունների կողմից ամենակարիքավոր համայնքներ ճանաչված աշակերտների շրջանում թվային միջոցների և ինտերնետ հասանելիության բացակայության պատճառով կրթական անհավասարության հաղթահարմանը՝ համահունչ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության առաջնահերթություններին: Ծրագրի անհրաժեշտությունը՝ Հայաստանում եւ Արցախում COVID-19-ի տարածմամբ և առցանց ուսուցման մեկնարկամբ, առաջ եկավ և էլ ավելի սրվեց աշակերտների շրջանում արդեն իսկ առկա կրթական անհավասարության խնդիրը: Համայնքներում բնակվող հարյուրավոր աշակերտներ բախվեցին կրթության հասանելիության դժվարությունների՝ համապատասխան թվային միջոցների սղության կամ իսպառ բացակաության պատճառով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի բարեգործական որակման նպատակն է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն իրականացնում է «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը, որի տվյալներն են՝ ▪ ՀՎՀՀ՝ 02645043

		▪ Հասցեն՝ Ամիրյան 18/3, բն.12 ▪ Հաշվարկային հաշիվ՝ 1570023320370100 ▪ Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն Բնագավառը՝ կրթություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 77,077,000 (յոթանասունյոթ միլիոն յոթանասունյոթ հազար) դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ 900 պլանշետ և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարություն՝ 200 պլանշետ: Սարքավորումների վերջնական սպառող են հանդիսանալու առավել կարիքավոր ճանաչված դպրոցները, որոնց հետ հիմնադրամը կնքելու է առանձին պայմանագրեր:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի սկիզբը՝ 25.09.2020 թ. , ավարտը՝ 10.10.2020 թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրը նախատեսում է 1,100 (մեկ հազար հարյուր) Lenovo M10 մոդելի պլանշետի ձեռքբերում և Հայաստանի ու Արցախի ամենակարիքավոր համայնքների 1,100 աշակերտի կրթության հասանելիությամբ ապահովում: Աշխատանքները ակնկալվում են ավարտել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 10-ը: Ծրագրի իրականացման ընդհանուր գինը կազմում է 77,077,000 (յոթանասունյոթ միլիոն յոթանասունյոթ հազար) դրամ, մեկ Lenovo M10 մոդելի պլանշետի արժեքն է 70,070.00 (յոթանասուն հազար յոթանասուն) ՀՀ դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման համար ձեռք է բերվում Lenovo M10 մոդելի թվով 1,100 (մեկ հազար հարյուր) պլանշետ, մեկ Lenovo M10 մոդելի պլանշետի արժեքն է 70,070.00 (յոթանասուն հազար յոթանասուն) դրամ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Ինչպես նաև ծրագրի ավարտից հետո Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ